

„պաշտօնական եւ հանրական հրամանք Ա-
 „ռաջնորդական Ատենիս առ եկեղեցականս եւ
 „առ երէցփոխանս՝ որ ընդ տեսչութեամբ
 „սորին եւ, եւս եւ փոփոխութիւնքն որ լի-
 „նին երբէք երբէք ի պաշտամունս եւ իղասս
 „քահանայից եւ դպրաց եւ երէցփոխանաց՝
 „ձեռնադրութեամբ, տեղափոխութեամբ, վար-
 „ձատրութեամբ, եւ կամ փոխմամբ նոցին
 „յաստեացս. դարձեալ եւ յառաջադիմութիւն
 „եւ հանգամանք ժողովրդական Դպրոցաց վի-
 „ճակիս, եւ վաստակք կամ փոփոխութիւնք
 „ուսուցչաց նոցին,—հարկ եւ պատշաճ համա-
 „րիմք՝ զգլխաւորագոյնս յայսպիսի տեղեկու-
 „թեանց տպագրութեամբ հրատարակել ամիս
 „յամսոյ, եւ առաքել առ ամենայն եկեղեցա-
 „կանս վիճակիս“:

Առաջնորդական Ատենան ճանչնալով մէկ
 կողմանէ այս առաջարկութեան կարեւորու-
 թիւնը, եւ միւս կողմանէ վկայելով որ այս-
 պիսի տեղեկութեանց առանձին տպագրու-

թիւնը ոչ սակաւ ծախուց կկարօտի, որոշեց
 նախ՝ որ 1863 տարւոյս սկիզբէն՝ այս Թեմա-
 կան Տեղեկութիւնները տպագրուին Մասեաց
 Աղաւնի ամսագրոյն սկիզբը ամէն ամիս: Երկ-
 րորդ՝ տպագրելի տեղեկութիւնները յանձ-
 նուին ընտրութեան կամ որոշման Գերապա-
 տիւ Ատենապետին: Երրորդ՝ Առաջնորդա-
 կան Ատենիս ձեռօքը յուղարկուին մէկ մէկ
 օրինակ առ ամենայն եկեղեցականս եւ առ
 երէցփոխանս վիճակիս: Զորրորդ՝ առանձին
 հաշիւ բռնուի յայտմ մասին Խալիպեան Ու-
 սումնարանի Տպարանին հետ: Եւ հինգերորդ՝
 Թեմական Տեղեկութեանց տպագրութեանը
 համար մասնաւոր Գործ կազմուի յԱռաջնոր-
 դական Ատենիս:

Այս անգամ կհրատարակուին աւասիկ ան-
 ցեալ 1862 տարւոյն մէջ աւարտեալ բազմա-
 թիւ գործերէն անոնք միայն՝ որոց տեղե-
 կութիւնը բազմաց օգտակար կամ հետաքրք-
 րական կրնայ երեւնալ. իսկ յաջորդ ամսա-
 թերթերուն մէջ աւելի ընդարձակ եւ նո-
 րանոր տեղեկութիւններ կգրուին:

Ատենադպիր, ՍՏ. ՍՈՒՐԷՆԵԱՆՑ.

ՔԱՂՈՒԱԾ ԳԼԽԱՌՐ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՆՑ ԶՕՐԱԳՐՈՒԹԵՆԷ 1862 ԱՄԻՆ.

Ի25 Յունուարի, ըստ առաջարկութեան ժո-
 ղովրդականաց Պետարապիոյ Հնչեշտ գիւղաքա-
 ղաքին, — որ է կալուած վսեմափայլ Յովհաննու
 Մուրատայ Մանուկ-Պէյի, — տեղւոյն եկեղեցւոյն
 երէցփոխան դրուեցաւ մեծարգոյ դպիրն Պօղոս
 Յովհաննիսեան Աւագեանց:

— Օտեսասյի եկեղեցւոյն երէցփոխան մեծար-
 գոյ եղիա Աղայն Քրմեանց իւր աստուածահա-
 ճոյ պաշտօնը ինը տարի ամենայն հաւատարմու-
 թեամբ կատարած լինելով, ըստ վկայութեան
 ժողովրդոց քաղաքին՝ առաջարկուեցաւ Կայսե-
 րական վարձատրութեան. եւ դարձեալ ըստ ըն-
 տրութեան եւ առաջարկութեան ժողովրդեան Օ-
 տեսասյի, նոյն բարեպաշտ եւ ազգասէր պա-
 տուական անձը նորէն հաստատուեցաւ երէցփո-
 խանութեան պաշտօնին մէջ՝ այլ եւս երեք տարի
 աշխատելու պայմանաւ:

— Ի15 Մարտի. Գրիգորուպօլսոյ սուրբ Աս-
 տուածածին եկեղեցւոյ քահանայն Տէր Խաչատուր
 Սամուէլեանց փոխադրուեցաւ իմովուութիւն եւ
 կեղեցւոյն Հին Խրիմու, եւ այս քաղաքի քահա-
 նայն Տէր Կարապետ Թադէոսեան փոխադրեցաւ

առժամանակեայ քահանայագործութեամբ իգիւ-
 ղաքաղաքն Հնչեշտ:

— 319 Մարտի. Նախիջեւան, Սուրբ Աստուա-
 ծածին եկեղեցւոյ բազմարդիւն երէցփոխան ազ-
 նուական Ստեփան Աղայն Նաթալով՝ իւր պաշ-
 տօնը երեք տարի ամենայն գովութեամբ կատա-
 րելէն յետոյ, ըստ խնդրոյ իւրում արձակեցաւ այն
 պաշտօնէն հանդերձ շնորհակալութեամբ ժողո-
 վրդեան եւ Առաջնորդական Ատենիս, եւ տեղը
 երէցփոխան կարգեցաւ մեծարգոյ Գրիգոր Աղայն
 Սալթիբով:

— 32 Ապրիլի. Նախիջեւանի սուրբ Թէոդորոս
 եկեղեցւոյն մեծարգոյ երէցփոխանը՝ Թադէոս Աղա
 Քէօլլէշահինեան՝ իրեն պաշտօնը վեց տարի ա-
 մենայն գովութեամբ կատարելէն յետոյ, նորէն
 ընտրութեամբ հաստատուեցաւ այն աստուածա-
 հաճոյ ծառայութեան մէջ՝ ընդունելով Առաջնոր-
 դական Ատենիս շնորհակալութիւնը:

— 37 Ապրիլի. Ըստ բարեպաշտական առաջար-
 կութեան ոմանց իբնակչաց Խրիմու սահմանեցաւ
 որ Խարասու բաղաքին մօտ եղած Ս. Փրկիչ վան-
 քին երկու ուխտական հանդիսաւոր օրերուն վե-

րայ աւելցուի այսուհետեւ մէկ օր մի եւս, այսինքն Քրիստոսի Փրկչին մերոյ Համբարձման տօնը. եւ այն օրը Գեր. Առաջնորդը անձամբ գնաց այն սուրբ վանքը, եւ աուր խորհրդոյն պատշաճական խրատ մը խօսեցաւ բարեպաշտ ուխտաւորաց:

— Ի25 Յունիսի. Առաջնորդական Ատենիս անդամ Գէորգ արեղայն Մարտիրոսեանց արծակուեցաւ իւր պաշտօնէն եւ յուղարկուեցաւ իՍ. Էջմիածին ընդ մեծարգոյ Փրոքուրորի Սիւնիոդոսին՝ Յովհաննու Եսայեան Միրաքեանց, որ երկու ամսէ իվեր այս կողմերս գտնուելով՝ դեռ նոր դարձեր էր Գեր. Առաջնորդին հետ նոր նախիջեւանէն, եւ կվերադառնար իՏփլիս:

— 32 Յուլիսի. Սուրբ Էջմիածնի միաբան՝ Ծերունի Մկրտիչ Վարդապետն Յովակիմեան, հրամանագրով Սիւնիոդոսին եկած լինելով իԹէոդոսիա իտնօրէնութիւն Առաջնորդի Վիճակիս, նորա կարգաւորութեամբը նշանակուեցաւ Վանահայր Ս. Խաչ վանից նախիջեւանի:

— Ի5 Յուլիսի. Տէր Թովմաս քահանայն Գանձապետեան եւ Տէր եղիա քահանայն Շաբշիքեանց ըստ խնդրոյ իւրեանց արծակուեցան իւրենց պաշտօնէն՝ որով անդամք էին Հոգեւորական Կառավարութեանն նախիջեւանի, շնորհակալութեան գրեր ընդունելով յԱռաջնորդական Ատենէս իրենց պաշտօնը խոհական եւ գործունեայ հաւատարմութեամբ կատարած լինելուն համար. եւ նոցա տեղը կարգեցան անդամք՝ Տէր Պօղոս քահանայն Խոճեան եւ Տէր Յովհաննէս քահանայն Սաղունեանց:

— 32 Յոգոստոսի. Սուրբ Էջմիածնի Սիւնիոդոսին հրովարտակին զօրութեամբը, որ հիմնեալ է իվերայ վճռողական հրամանի Վեհափառ Կաթողիկոսին ազգիս Հայոց, շրջաբերական Թրդութով պատուիրուեցաւ ամենայն Հոգեւորական Կառավարութեանց Վիճակիս, եւ քահանայից Տաւրիոյ, որ մեծ պահոց հասարակ օրերը սուրբ պատարագը չմատուցանեն, ոչ ննջեցելոց եւ ոչ կենդանեաց համար, եւ ոչ ի՛նչ եւ իցէ պատճառաւ:

— Ի10 Սեպտեմբերի. Փոթի քաղաքին մաքսատան աստիճանաւորներէն Ստեփանոս Զաքարեան Սուրէնեանց, կարգեցաւ Ատենադպիր Առաջնորդական Ատենիս:

— Ի27 Սեպտեմբերի. Եւպատորիոյ (Կեօզլէվի)

Ս. Նիկողայոս եկեղեցւոյն երէցփոխան աստիճանաւոր Յովսէփ աղայն Մուրատեանց, որ տասուերկու տարի ամենայն ջերմեռանդութեամբ եւ գովութեամբ կատարեց այն պաշտօնը, ըստ խնդրոյ իւրում արծակուեցաւ պաշտօնէն՝ հանդերձ շնորհակալութեամբ ժողովրդեան քաղաքին, եւ Առաջնորդական Ատենէս առաջարկուեցաւ Կայսերական վարձատրութեան. իսկ նորա տեղը ընտրուեցաւ նոյն քաղաքի վաճառական Գրիգոր Աղայն Յովսէփեանց:

— 38 Հոկտեմբերի. Ագքիւման քաղաքի սուրբ Աստուածածին եկեղեցւոյն երէցփոխան մեծարգոյ Կարապետ դպիրն Քիւչիկեան ըստ խնդրոյ իւրում արծակեցաւ պաշտօնէն, ընդունելով Առաջնորդական Ատենիս շնորհակալութիւնը իւր ջերմեռանդ եւ հաւատարիմ ծառայութեանը համար. եւ տեղը նշանակեցաւ Սարգիս Աղայն Զէրքէզեանց:

— Ի15 Հոկտեմբերի. Նախիջեւանի Մայր եկեղեցւոյն Աւագ սարկաւագ Սրապիոն Փրոթփոփեանց, այս տարի հրամանաւ հոգեւորական իշխանութեան իւրոյ իՍ. Էջմիածին յուղարկուած լինելով որ Վիճակիս եկեղեցեաց հարկաւոր եղած սրբալոյս մեռոնը բերէ, գովութեամբ կատարեց այս պաշտօնը եւ տաժանական ճանապարհորդիւնը. որոյ վասն ընդունեցաւ հրաման քահանայական գաւազանաւ շրջելու արտաքոյ եկեղեցւոյն:

— Ի22 Հոկտեմբերի. Ըստ առաջարկութեան Առաջնորդական Ատենիս՝ Ս. Էջմիածնի Սիւնիոդոսին կարգադրութեամբը հարկատուութեան վիճակէն արծակուելով՝ եկեղեցականաց կարգը դասեցան Մեծ Սալայ գիւղի բնակիչներէն Կարապետ Ֆիշտով, եւ նախիջեւանեցի Ալեքսան Զորայեանց:

— Նոյն սրբագումար Սիւնիոդոսին վճռովը, ըստ խնդրոյ Տէր Նիկողայոս Սաղիմեան քահանային նախիջեւանի եւ ըստ առաջարկութեան Առաջնորդական Ատենիս արծակեցաւ յեկեղեցական կոչմանէ՝ որդին նորա Ղազարոս Սաղիմեանց:

— 317 Դեկտեմբերի. Նախիջեւանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ քահանայն Տէր Մկրտիչ Մխիթարեանց յետ երկարատեւ տկարութեան փոխեցաւ առ Աստուած, եւ նորա տեղը ծխատէր նշանակուեցաւ Մահտեսի Տէր Յարութիւն քահանայն Քարաքաշեանց: